

ՀՀ ԳԱԱ «ՀԱՅԿԵԼՍՍՏԵԽՆՈԼՈԼՈԳԻԱ» ԳԱԿ ՊՈԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՍՏԴԻԿ ՍԵՐԵՅԵՎՆԱ

CALLISIA FRAGRANS (LINDL.) WOODSON-Ի ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԿԵԼՍՍՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԲԱՏՕՅԱ ՀԻՂՈՊՈՆԻԿԱՅԻ
ՊՅՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գ.00.14 - «Կեղևաբույսերի ոգի» մասնագիտության
կեղևաբույսերի գիտության ոլորտի թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատեստատային

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2016

НПЦ «АРМБИОТЕХНОЛОГИЯ» НАН РА ГНКО

КАРАПЕТЯН АСТХИК СЕРЕЖЕВНА

ПРОДУКТИВНОСТЬ *CALLISIA FRAGRANS* (LINDL.) WOODSON И РАЗРАБОТКА
БИОТЕХНОЛОГИИ В УСЛОВИЯХ ОТКРЫТОЙ ГИДРОПОНИКИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата биологических наук по специальности
03.00.14 - «Биотехнология»

ЕРЕВАН - 2016

Արտնախոսու լ թ յ ան թե ման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոնոսրնիկայի արոբլեմների ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս.Խ
Մայրաբայան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ կ.գ.դ., արոՖեսոր Հ.Ռ.
Վարդաբայան
գ.գ.թ. Լ.Մ. Թադևոսյան

Առաջատար կազմակերպիչ ղեկավար՝ Երևանի
համալսարան պետական

Արտնախոսու լ թ յ ան առաջադրու լ թ ղեկավար կայանակու է 2016 թ.
հոկտեմբերի 7-ին, ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ «Հայ կենսաառեխնու լ ոգիա»
ԳԱԿ-ում գործող ՀՀ ԲՈՂ-ի Կենսաառեխնու լ ոգիայի 018 մասնագիտական
խորհրդի նիստում:
Հասցե՝ 0056, ՀՀ, ք. Երևան, Գյուղը շ յ ան փող. 14, հեռ/ֆաքս՝ (37410)
654180:

Արտնախոսու լ թ յ անը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ
«Հայ կենսաառեխնու լ ոգիա» ԳԱԿ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաջված է 2016 թ. սեպտեմբերի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ քարտուղար,
կենսաբանական գիտու լ թ ղեկնների թեկնածու
Ավետիսովա Գ.Ե.

Тема диссертации утверждена в Институте проблем гидропоники им. Г.С. Давтяна
НАН РА.

Научный руководитель: член-корреспондент НАН РА С.Х. Майрапетян

Официальные оппоненты: д.б.н., профессор Г.Р. Вардапетян
к.с.-х.н. Л.М. Тадевосян

Ведущая организация: Ереванский государственный университет

Защита диссертации состоится 7-го октября 2016 г. в 15⁰⁰ часов на заседании
специализированного совета 018 Биотехнологии ВАК РА при НИИ
«Армбиотехнология» НАН РА.

Адрес: 0056, РА, г. Ереван, ул. Гюрджяна 14, тел./факс (37410) 65 41 80.

С диссертацией можно ознакомиться в библиотеке НИИ «Армбиотехнология» НАН
РА.

Автореферат разослан 7-го сентября 2016 г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат биологических наук

Г.Е. Аветисова

ՍԵՒԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒ Ր ԲՆՈՒ ԹԱԳԻՐԸ

Աշխատանքի արդիականությունը: Հիդրոպոպոնիկան, որպես բույսերի անեցման ժամանակակից կենսատեխնոլոգիական եղանակ, այսօր իր տարատեսակներով և տեխնոլոգիական հազեցվածություններով ուրույն տեղ է զբաղեցնում համաշխարհային գյուղատնտեսության և սննդարդյունաբերության մեջ: Շնորհիվ օդա-ջրա-սննդային պայմանների կառավարման հնարավորության՝ հիդրոպոնիկ եղանակով անեցման դեպքում բույսերի արմատները մշտապես հազեցած են լինում ջրով, օդով և սննդարար նյութերով, ինչը, գրեթե ամբողջությամբ, ապահովում է արմատաբնակ միջավայրի օպտիմալ ռեժիմը: Արդյունքում ստացվում է ջրի և սննդարար տարրերի նվազագույն ծախսով, կենսակտիվ նյութերով հարուստ, բարձր արդյունավետությամբ բուսասնունք (Դավթյան, Մայրապետյան, 1976; Brown-Paul, 2016; Carruthers, 2007; Jones, 2005; Resh, 2013):

Այսօր հիդրոպոպոնիկան լայն զարգացում է ապրում ամբողջ աշխարհում և առավել նպատակահարմար է այն կիրառել հատկապես սակավահող և ավանդական երկրագործության համար ոչ պիտանի հողատարածքներ ունեցող երկրներում, ինչպիսին ևս Յայաստանի (Майрапетян, 1989; Furlani, 1999; Jensen, 1999; Rodriguez-Delfin, 2012; Sheikh, 2006): Քանի որ հիդրոպոպոնիկումների կառուցումը պահանջում է ֆինանսական մեծ ներդրումներ (Давтян, 1969), ուստի, հիդրոպոնիկ եղանակով առավել նպատակահարմար է թանկարժեք, փոքրածավալ, հազվագյուտ և անհետացող մշակաբույսերի (եթերայուղատու, դեղատու, ներկատու և այլն) արտադրությունը:

Այդ տեսանկյունից, որպես հետազոտության օբյեկտ, ընտրվել է *Callisia fragrans* (բուրավետ կալիզիա) դեղաբույսը: Դեղաբույսի նկատմամբ հետաքրքրությունը այս պայմանավորված է վերջինիս բարձր դեղաբանական արժեքով: Գիտական տվյալների համաձայն, այն ապրուսականում է ամինաթթուներ, ածխաջրեր, օրգանական թթուներ, ֆենոլային միացություններ, վիտամիններ, սապոնիններ և այլ կենսակտիվ նյութեր (Оленников *и др.*, 2008; Юминова, 2013; Chernenko *et al.*, 2007; Olennikov *et al.*, 2010):

Ուստի, այս արժեքավոր դեղաբույսի ներմուծումը բացօթյա հիդրոպոպոնիկում, դրա անեցման կենսատեխնոլոգիայի մշակումը **արդիական ու հեռանկարային խնդիր է** և կարող է լուրջ նախադրյալներ ստեղծել Յայաստանում բուրավետ կալիզիայի լայնամասշտաբ հիդրոպոպոնիկ արտադրության կազմակերպման համար, որը կապահովի Եկոլոգիայի և բարձրորակ դեղահումքի ստացում կառավարվող փակ համակարգում, ինչը կարող է ոչ միայն լիովին բավարարել Յայաստանի առողջապահության բնագավառի պահանջները, այլ և արտահանվել:

Աշխատանքի նպատկը և խնդիրները: Ատենախոսական աշխատանքի նպատակն է առաջին անգամ Արարատյան դաշտի բացօթյա հիդրոպոպոնիկայի պայմաններում մշակել բուրավետ կալիզիայի անհող անեցման կենսատեխնոլոգիան: Այդ նպատակի իրականացման համար հետազոտություններում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- բացահայտել տարբեր լցանյութերի, սննդալուծուցիչների և դրանց տարբեր խտուրթուսների, սննդալուծուցիչում գլխավոր մակրոտարրերի (N, P, K) տարբեր հարաբերակցությունների, սնուցման հաճախականության, տնկարկի խտություն ազդեցությունը բուրավետ կալիգիայի աճի, զարգացման, բերքատվության, ինչպես նաև դեղահումքի ֆիզիոլոգա-կենսա-դեղաբանական ցուցանիշների վրա;
- մշակել դեղաբույսի բարձր բերքատվություն և դեղահումքում կենսակտիվ նյութերի առավելագույն սինթեզ ապահովող մակրոտարրերի (N, P, K) օպտիմալ հարաբերակցությունները և ռեգրեսիոն հավասարումների տեսքով կառուցել դեղաբույսի արդյունավետության բարձրացման մաթեմատիկական մոդելները;
- գնահատել դեղահումքի էկոլոգիական անվտանգությունը և համապատասխանությունը ընդունված չափանիշներին;
- հետազոտել դեղահումքի ռադիոպաշտպանիչ և հակաօքսիդանտային ակտիվությունը;
- ուսումնասիրել դեղաբույսի արդյունավետությունը հիդրոպոնիկական կիսաարտադրական պայմաններում;
- գնահատել դեղաբույսի անհող աճեցման տնտեսական արդյունավետությունը:

Աշխատանքի գիտական նորույթը: Առաջին անգամ Արարատյան

դաշտի բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում իրականացվել են բուրավետ կալիգիայի ուսումնասիրմանն ուղղված, գիտականորեն հիմնավորված աշխատանքներ.

- դեղաբույսը ներմուծելով հիդրոպոնիկ մշակույթ՝ հաստատվել է դրա աճեցման հնարավորությունը միջավայրի տարբեր պայմաններում;
- ուսումնասիրվել է աճեցման պայմանների ազդեցությունը դեղաբույսի աճի և զարգացման օրինաչափությունների, բերքատվության, դեղահումքի ֆիզիոլոգա-կենսա-դեղաբանական առանձնատկությունների վրա;
- մշակվել են դեղաբույսի որակական և քանակական արդյունավետության բարձրացմանը նպաստող միջավայրի օպտիմալ պայմանները;
- հաշվարկվել են սննդալուծուցիչում N, P, K մակրոտարրերի օպտիմալ հարաբերակցությունները, որոնք կարող են ապահովել դեղաբույսի բարձր բերքատվություն և դեղահումքում կենսակտիվ նյութերի ինտենսիվ սինթեզ;
- կառուցվել են դեղաբույսի արդյունավետության բարձրացման մաթեմատիկական մոդելները;
- գնահատվել է դեղահումքի էկոլոգիական անվտանգությունը;
- համեմատական հետազոտություններ են անցկացվել դեղահումքի ռադիոպաշտպանիչ և հակաօքսիդանտային ակտիվության ուսումնասիրմանն ուղղված;
- իրականացվել են նաև բուրավետ կալիգիայի կիսաարտադրական հիդրոպոնիկական փորձարկումներ, որոնց հիման վրա արվել է դեղաբույսի անհող աճեցման տնտեսական արդյունավետության նախնական գնահատականը;

- հատկապես է որակյալ դեղահումք ստանալու նպատակով բուրավետ կալիզիայի հիդրոպոնիկ արտադրության բարձր արդյունավետությանը և հեռանկարայնությանը:

Աշխատանքի գործնական արժեք:

Յուրաքանչյուր աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտությանը և ներդրումներին արդյունքները՝ Արարատյան դաշտի բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում կարելի է արդյունավետ կերպով կազմակերպել բուրավետ կալիզիայի լայնամասշտաբ անհող արտադրությանը՝ էկոլոգիապես անվտանգ և կենսակառավարող նյութերի բարձր պարունակությամբ ու ցածր ինքնարժեքով բարձրորակ դեղահումք ստանալու նպատակով: Միաժամանակ, հնարավորություն և կատարելի պլանիչական երկրագործության համար ոչ պիտանի հողատարածքները ներառել գյուղատնտեսական արտադրության ոլորտ:

Պատասխանող հիմնադրույթները: Պաշտպանության են ներկայացված.

- բուրավետ կալիզիայի աճի, զարգացման և բերքատվության վրա տարբեր լցանյութերի, սննդալուծույթների և դրանց տարբեր խտությանը և ներդրումներին, սննդալուծույթում գլխավոր մակրոտարրերի տարբեր հարաբերակցությանը և ներդրումներին, սնուցման հաճախականությանը, տնկարկի խտությանը և ազդեցությանը և համեմատական վերլուծությանը և ներդրումներին արդյունքները;
- բուրավետ կալիզիայի դեղահումքի ֆիզիոլոգիա-կենսա-դեղաբանական ցուցանիշների փոփոխությանը՝ պայմանավորված տարբեր լցանյութերի, սննդալուծույթների և դրանց տարբեր խտությանը և ներդրումներին, սննդալուծույթում գլխավոր մակրոտարրերի տարբեր հարաբերակցությանը և ներդրումներին, սնուցման հաճախականությանը, տնկարկի խտությանը և ազդեցությանը;
- բուրավետ կալիզիայի հանքային սննդամոլայնության օպտիմալացումը և դեղաբույսի բերքատվությանը և դեղահումքում կենսակառավարող նյութերի սինթեզի բարձրացման մաթեմատիկական մոդելների մշակումը՝ ռեգրեսիոն հավասարումների տեսքով;
- դեղահումքի ազդող-մարդկությանը և կենսական վերլուծությանը և ներդրումներին արդյունքները;
- դեղահումքի մարդկությանը և կենսական վերլուծությանը և ներդրումներին արդյունքները;
- բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում բուրավետ կալիզիայի կիսաարտադրական փորձարկումների արդյունքները;
- դեղաբույսի անհող աճեցման տնտեսական արդյունավետությանը:

Առնչույթ ունեցող գիտական թեմաների հետ

Աշխատանքի մի մասը (2013-2014 թթ.) կատարվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի գիտական և գիտատեխնիկական գործունեությանը և պայմանագրային (թեմատիկ) 13-1F063 «Բուրավետ կալիզիայի (*Callisia fragrans* Woodson) արդյունավետությանը, որակական ամանձնատեսակությանը և

կենսաւոտ խնու ռոգիայի մշակումը անհող մշակույթի պայմաններում» ֆինանսավորման շրջանակներում:

Յեղիսակի անձնական ներդրումը: Յեղիսակն անձամբ իրականացրել է փորձարարական (դաշտային ու լաբորատոր) աշխատանքները, վերլուծել ու ամփոփել ստացված արդյունքները, մշակել ատենախոսության թեմայով գրականություն, ձևակերպել գիտական հոդվածներն ու ատենախոսությունը: Ստացված տվյալների վիճակագրական վերլուծությունը և մաթեմատիկական մոդելների կառուցումը ևս իրականացվել են հեղինակի կողմից: Ակտիվորեն մասնակցել է նաև դեղահումքի ռադիոպաշտպանիչ ակտիվության *in vivo* հետազոտության աշխատանքներին: Դեղահումքի ֆիզիոլոգիական, կենսա-դեղաքիմիական և ռադիոքիմիական հետազոտության ներքին իրականացվել են հեղինակի անմիջական մասնակցությամբ և ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի արոքը մեների ինստիտուտի (ՀՊԻ) «Բույսերի սննդառության և արդյունավետության» ու «Ռադիացիոն ագրոքիմիայի» լաբորատորիաների աշխատակիցների օժանդակությամբ:

Ատենախոսության արդյունքների ապրոքացիան:

Հետազոտությունները արդյունքները ներկայացվել և քննարկվել են ՀՊԻ 2011-2015 թթ. գիտական խորհրդի ընդլայնված նիստերում և տարբեր երիտասարդական գիտազործնական գիտաժողովներում՝ «Բույսերի արտադրության ինովացիոն տեխնոլոգիաների ժամանակակից հիմնախնդիրները» (23-24 սեպտեմբերի 2013 թ., Երևան), «Բուսական աշխարհի հետազոտության հեռանկարները և հիմնախնդիրները» (13-16 մայիսի 2014 թ., Յալթա), «Կերբին հետազոտությունները ժամանակակից գիտության բնագավառում. փորձառություն, ավանդույթներ և ինովացիաներ» (28-29 ապրիլի 2014 թ., Սանտո-Պետրբուրգ): Ատենախոսության քննարկումը կայացել է 2016 թ. ապրիլի 7-ին՝ ՀՊԻ-ի գիտական խորհրդի ընդլայնված նիստում (Արձանագրության թիվ 4):

Հրատարակումներ: Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են 7 գիտական աշխատանքներում:

Աշխատանքի կատարման վայրը: Դեղաբույսի աճեցումը, կենսաապահական և ֆենոլոգիական դիտարկումներն իրականացվել են ՀՊԻ-ի վեգետացիոն փորձադաշտում և հիդրոպոնիկական փորձարարական կայանում, ֆիզիոլոգա-կենսա-դեղաքիմիական վերլուծությունները՝ ՀՊԻ-ի «Բույսերի սննդառության և արդյունավետության», իսկ ռադիոքիմիական վերլուծությունները՝ «Ռադիացիոն ագրոքիմիայի» լաբորատորիաներում: Դեղահումքում ծանր մետաղների (ՃՍ) որոշումն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Էկոլոգիանոսֆերային հետազոտությունների կենտրոնի «Կենտրոնական անալիտիկ փորձարկման լաբորատորիայում»: Դեղահումքի ռադիոպաշտպանիչ և հակաօքսիդանտային ակտիվության հետազոտությունները կատարվել են ՀՀ առողջապահության նախարարության ճարտարաշային բժշկության և այրվածքների գիտական կենտրոնի կենսաֆիզիկայի լաբորատորիայում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, ամփոփումից, եզրակացություններից, կիրառական առաջարկներից և գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը կազմում է

համակարգչային 119 էջ, որը պարունակում է 41 աղյուսակ և 27 նկար: Գրականության ցանկը ներառում է հայերեն, ռուսերեն և անգլերեն 160 աղբյուր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԳԼՈՒԽ1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱԲԿ

Գրական ակնարկում ներկայացված է հիդրոպոնիկայի գարգացման համառոտ պատմությունը, դրա դերն ու տարածվածությունը ժամանակակից աշխարհում և Հայաստանում՝ հիդրոպոնիկայի, որպես գիտական ուղղության, կայացման նախադրյալները, դրա արդյունաբերական ու տնտեսական նշանակությունը: Նկարագրված են հիդրոպոնիկայի հիմնական տեսակները, տարբեր լցանյութերի ֆիզիկա-քիմիական բնութագրերը: Ներկայացված է նաև հանքային սննդառության դերն ու նշանակությունը բույսերի կյանքում:

ԳԼՈՒԽ2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Հետազոտության օբյեկտը: *Callisia fragrans* (Lindl.) Woodson-ը (բուրավետկալիզիա) կոմեյլինազգիների (*Commelinaceae*) ընտանիքին պատկանող բազմամյա, սուկուլենտ բույս է: Ժողովրդի մեջ դեղաբույսն առավել հայտնի է ռսկեբեդիկ (золотой ус) անվանումներով: Գիտական տվյալների համաձայն, դեղաբույսը հանդիսանում է հզոր ադապտացեն (Раднаева, 2009), օժտված է հակաօքսիդանտային, հակաբակտերիալ (Мисин *u др.*, 2010; Сажина, Мисин, 2012; Misin, Sazhina, 2010; Tan *et al.*, 2014), հակառադիկալային (Оленников *u др.*, 2008), հակահիպոքսիկ (Раднаева, 2007), սթրեսապաշտպանիչ, իմունամոդուլացնող (Шантанова *u др.*, 2009), ակտոպրոտեկտորային (Шантанова *u др.*, 2008), հակամոտագեն (Фатыхова *u др.*, 2008; Фатыхова *u др.*, 2010, Fatychova *et al.*, 2009), ջերմիջեցնող (Коренская *u др.*, 2010), հակաետրայտիկ (Yarmolinsky *et al.*, 2010) և այլ բուժիչ հատկություններով: Դեղաբույսի հիդրոլիզատն օժտված է լակտոբակտերիաների անը խթանող հատկությամբ (Тимченко, Пенькова, 2009): Ներկայումս հայտնի դեղագործական ընկերությունների կողմից արտադրվում են ավելի քան 40 տեսակի դեղամիջոցներ՝ հյուսեր, ոգեթուրմեր, բազամներ, նրբաքսուլներ և այլ պատրաստուկներ, որոնց բաղադրության մեջ մտնում է նաև բուրավետկալիզիա:

Փորձերի սխեման և կիրառված մեթոդները: Գիտափորձերն իրականացվել են 2011-2015 թթ.: Արարայան դաշտի բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում դեղաբույսի արդյունավետությունը գնահատելու համար փորձարկվել են հիդրոպոնիկայում լայն կիրառություն ունեցող տարբեր լցանյութեր (3-15 մմ մասնիկների տրամագծով գլաքար, հրաբխային կարմիր խարամ և գլաքարի ու հրաբխային կարմիր խարամի 1:1 ծավալային հարաբերությամբ խառնուրդ), տարբեր սննդալուծույթներ և դրանց տարբեր խտություններ (Դավթյանի /0,5; 0,75; 1,0; 1,25 Ն/, Ստեյնների /1,0 Ն/, Չեսնոկով-Բազիրիսայի /1,0 Ն/, Կնոպի /1,0 Ն/) (Դավթյան, Մայրապետյան, 1976; Стейнер, 1995; Чесноков *u др.*, 1960), սննդալուծույթի տրման տարբեր հաճախականություններ

(օրական մեկ, երկու, երեք և երկու օրը մեկ անգամ), սննդալուծույթում N, P, K մակրոտարրերի տարբեր հարաբերակցությունները ($N_{70}P_{15}K_{15}$, $N_{15}P_{70}K_{15}$, $N_{15}P_{15}K_{70}$ ատոմ%), տնկարկի տարբեր խտությունները (8, 10, 12 և 14 բույս/մ²): Կատարվել են նաև կիսասարտադրական փորձարկումներ: Գիտափորձերի ստուգիչ է հանդիսացել հողային մշակույթը, որտեղ պահպանվել են ընդունված ագրոտեխնիկական բոլոր կանոնները (ոռոգում, փխրեցում, պարարտացում և այլն):

Տիզիոլոգակենսադեղաքիմիական վերլուծություններ:

Տերևներում ընդհանուր քրի պարունակությունը և դրա ֆրակցիոն կազմը, բջջալուծի օսմոտիկ ճնշումը որոշվել են ըստ Գուսևի (Гусев, 1989), ֆոտոսինթետիկ գունանյութերի (բլորոֆիլ a+b, կարոտինոիդներ) պարունակությունը՝ ըստ Վետշտայնի (Wettstein, 1957), տերևներում և ընծյուններում սսկորբինաթթվի պարունակությունը՝ ըստ երմակովի (Методы..., 1972; Физиологические..., 2000): Չոր դեղահումքում էքստրակտիվ նյութերի, դաբաղանյութերի, ալիսախարիդների, ընդհանուր մոխրի և հիգրոսկոպիկ խոնավության քանակական վերլուծությունները կատարվել են համաձայն ՊԴ (XI)-ի և Գրինկևիչի (Государственная..., 1987; 1990; Химический..., 1983), իսկ գումարային ֆլավոնոիդները և ֆենիլարոպանոիդները որոշվել են համաձայն այլ դեղաբույսերի համար մշակված հայտնի մեթոդների (Георгиевский *и др.*, 1990; Химический..., 1983; Шагалиева, 2012)՝ մեր կողմից մոդիֆիկացված տարբերակներով, որոնք մանրամասն նկարագրված են ատենախոսության մեջ: Տերևներից և ընծյուններից ստացված հյուսվածքում չոր նյութի պարունակությունը որոշվել է հայտնի մեթոդի հիման վրա (Руссиян, 1957):

Ազո-ռադիոքիմիական վերլուծություններ:

Դեղահումքում մի շարք առավել թունավոր ՃՄ-ի՝ Ni, Pb, Cr, Cd, As, Hg որոշումը կատարվել է ատոմ-աբսորբցիոն սպեկտրոմետրիայի (PerkinElmer..., 2000), վերահսկվող արհեստական ռադիոնուկլիդների (ՌՆ) (⁹⁰Sr, ¹³⁷Cs) պարունակությունը՝ ռադիոքիմիական մեթոդներով (Павлоцкая, 1966): Տվյալները համեմատվել են պետական ստանդարտների հետ (Պարենային..., 2010):

Դեղահումքի ռադիոաքտային և հակաօքսիդանտային ակտիվություն և հետազոտություններ:

Դեղաբույսի ռադիոաքտային ակտիվությունը ստուգելու համար ճառագայթահարման (650 Ռ) ենթարկելուց առաջ առնետների տրվել է դեղաբույսի կողային ընծյուններից ստացված ջրային թուրմ և թարմ հյուսվածք: Այնուհետև գրանցվել է առնետների անկման դինամիկան՝ հետճառագայթային 30 օրվա ընթացքում (Kaplan, Meier, 1958): Դեղաբույսի հակաօքսիդանտային ակտիվությունը գնահատվել է ֆոտոքիմիալ միներսցենտային մեթոդով (Lewin, Popov, 1994):

Հանքային սննդառության օպտիմալացում:

Դեղաբույսի բերքատվության և դեղահումքում կենսակտիվ նյութերի սինթեզի բարձրացման նպատակով սննդալուծույթում N, P, K մակրոտարրերի օպտիմալ հարաբերակցությունների հաշվարկման համար կիրառվել է Հոմեսի «սիստեմատիկ տարբերակների» մեթոդը (Homès, 1961): Դ.Բ. Վախմիստրովի կորելացիոն գոնդավորման մեթոդի (Вильямс *и др.*, 1986; Вахмистров, Смирнова, 1991; Вахмистров, Воронцов, 1994а; 1994б; 1994в; 1994г;

1995a; 1995b) կիրառմամբ կազմվել են բույսի բերքատվության և դեղահումքում կենսակտիվ նյութերի սինթեզի բարձրացման մաթեմատիկական մոդելները:

Փորձերը դրվել են 4-8 կրկնողությամբ: Ստացված տվյալների վիճակագրական վերլուծությունները կատարվել են ըստ Բ.Ա. Դոսպեխովի մեթոդի (Доспехов, 1985), ինչպես նաև կիրառվել է GraphPad Prism 6 (GraphPad Software, Inc.) վիճակագրական համակարգչային ծրագիրը:

Փորձերի սխեման և կիրառված մեթոդներն առավել հանգամանալից նկարագրված են առենախոսության մեջ:

ՀԵՏԱՉՈՏՈՒ ԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԳԼՈՒԽ3. ՄԻՋԱՎԱՅՐԻ ՏԱՐԲԵՐ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՉԴԵՑՈՒ ԹՅՈՒՆԸ CALLISIA FRAGRANS-Ի (ԲՈՒՐԱՎԵՏ ԿԱԼԻՉԻԱ) ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒ ԹՅԱՆ ԿՐԱ

Ժողովրդական բժշկության մեջ տարածված է այն կարծիքը, որ բուրավետ կալիգիան բուժիչ հատկություններ է ձեռք բերում, երբ նրա վրա զարգանում են 9 և ավելի միջհանգույցներ ու նեցող, դարչնամանուշակագույն ընձյուղներ (Большая..., 2007; Огарков, 2004): Գրական տվյալների համաձայն, կենսաբանական ակտիվությամբ օժտված է դեղաբույսի ողջ վերգետնյա զանգվածը (Оленников *и др.*, 2008; Misin, Sazhina, 2010; Yarmolinsky *et al.*, 2010), միևնույն ժամանակ, ըստ որոշ գիտական աղբյուրների, դեղահումք է համարվում դեղաբույսի 9-12 և ավելի միջհանգույցներ ու նեցող կողային ընձյուղները (Ибрагимов *и др.*, 2011): Ուստի, դեղաբույսի անցման քանակական արդյունավետությունը գնահատելիս վերլուծության է ենթարկվել ողջ վերգետնյա զանգվածը, այդ թվում 9 և ավելի միջհանգույցներ ու նեցող, դարչնամանուշակագույն ընձյուղները, որոնցում և իրականացվել են հիմնական վերլուծությունները: Մեր կողմից որոշ համեմատական հետազոտություններ են տարվել նաև դեղաբույսի տերևներում:

Կենսամետրիկ չափումների և ֆենոլոգիական դիտարկումների համաձայն, հիդրոպոնիկ բույսերը, հողային ստուգիչի համեմատ, աչքի են ընկել աճի ու զարգացման անհամեմատ բարձր ցուցանիշներով (նկ. 1): Միաժամանակ, հիդրոպոնիկայի պայմաններում դեղաբույսի աճի և զարգացման օրինաչափությունները խիստ տարբերվել են՝ կախված միջավայրում առկա տարբեր գործոնների ազդեցությունից: Վեգետացիայի սկզբնական շրջանում, երբ օդի ջերմաստիճանը, հետևաբար նաև գույլորշիացումը, շատ բարձր է (Аракелова, 1984), բույսերի ավելի արագ են զարգացել զլաքարում և զլաքարի ու հրաբխային խարամի խառնուրդում, ինչը բացատրվում է կիրառված լցանյութերի ֆիզիկա-մեխանիկական առանձնահատկություններով: Պատկերը փոխվում է օդի ջերմաստիճանի բարձրացման հետ և բույսերի ավելի ինտենսիվ աճ դիտվում է առավել խոնավածուծ լցանյութերում: Ինչևէ, վեգետացիայի ավարտին (նկ. 2) փորձարկված լցանյութերի միջև էական տարբերություններ չեն դիտվել՝ դեղահումքի քանակական արդյունավետության առումով:



Նկ. 1 Զիդրոպոնիկայի և հողային մշակույթի պայմաններում աճեցված բուրավետկալիզիայի կողային ընձյուղները



ա բ



Նկ. 2 Բուրավետկալիզիան անհող (ա) և հողային (բ) մշակույթի պայմաններում վեգետացիայի վերջում

Տարբեր լցանյութերում աճեցված բույսերը տերևների, ընդհանուր ու 9 և ավելի միջհանգույցներով, դարչնամանուշակագույն ընձյուղների, ինչպես նաև վերգետնյա թարմ զանգվածով գերազանցել են հողային բույսերին, համապատասխանաբար, 2,8-3,2; 2,5-2,7; 1,9-2,2; 2,7-2,9 անգամ: Չոր զանգվածի դեպքում նշված ցուցանիշները, ստուգիչի համեմատ, ավելացել են, համապատասխանաբար, 2,8-3,0; 2,3-2,5; 1,8-2,1 և 2,6-2,7 անգամ: Հետագա հետազոտություններում նախընտրել ենք որպես լցանյութ կիրառել գլաբարի և հրաբխային կարմիր խարամի խառնուրդը, ինչը հնարավորություն է տալիս, ի հաջիվ երկու տարբեր լցանյութերի ֆիզիկա-մեխանիկական հատկությունների համադրության, ավելի արդյունավետ կերպով դիմակայել արտաքին միջավայրի փոփոխական պայմաններին:

Տարբեր սննդալուծույթների կիրառման դեպքում ևս հիդրոպոնիկ բույսերը բերքատվությամբ էապես գերազանցել են հողային բույսերին: Չնայած փորձարկված սննդալուծույթների միջև էական տարբերություններ չեն գրանցվել (բացառությամբ է կազմել Ստյենի տարբերակը, որում տերևների բերքատվությունը մոտ 50%-ով զիջել է Կնոպի տարբերակին) բուրավետ կալիզիայի դեղահումքի քանակական արդյունավետության առումով, սակայն, համեմատաբար բարձր ցուցանիշներով աչքի են ընկել Դավթյանի և Կնոպի տարբերակները: Հետագա հետազոտություններում կիրառվել է Դավթյանի սննդալուծույթը:

Ինչ վերաբերում է Դավթյանի սննդալուծույթի տարբեր խտություններին, ապա 0,5-1,0 Ն տիրույթը դրական է ազդել դեղաբույսի քանակական արդյունավետության վրա՝ տերևների,

ընդհանուր ու 9 և ավելի միջհանգույցներ ունեցող, դարչնամանուշակագույն ընձյուղների և վերգետնյա թարմ գանգվածով գերազանցելով 1,25 և տարբերակին, համապատասխանաբար, 1,7-2,1; 2,1-2,4; 1,9-2,3; 1,8-2,2 անգամ, իսկ ստուգիչին՝ համապատասխանաբար, 3,0-3,9; 2,8-3,3; 2,4-2,8; 2,9-3,5 անգամ: Նույնատիպ արդյունքներ են գրանցվել նաև չոր գանգվածի դեպքում (նկ. 3): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սննդալուծույթի 0,5-1,0 և խոտըլուծների միջև էական տարբերություններ չեն գրանցվել՝ դեղահումքի արդյունավետության առումով, հետագա գիտափորձերում նպատակահարմար ենք համարել կիրառել սննդալուծույթի 0,5 և խոտըլուծը, ինչը, մի կրող և մակրոտարրերի ծախսի շուրջ կիսով չափ կրճատման հաշվին, կարծրացնի ստացվող դեղահումքի տնտեսական արդյունավետությունը: Բացի այդ, նոսր սննդալուծույթի կիրառումը հնարավորություն է տալիս խուսափել լցանյութերի հնարավոր աղակալուծից: Սնուցման հաճախականությունը ևս որոշակի ազդեցություն է ունեցել դեղաբույսի արդյունավետության վրա: Այն հայտ է եղել հատկապես սնուցման օրական երկու անգամյա հաճախականության առավելությունը երկու օրը մեկ անգամի նկատմամբ: Անկախ սնուցման հաճախականությունից՝ բոլոր հիդրոպոնիկ տարբերակներն էապես գերազանցել են ստուգիչին տերևների, ընդհանուր ու 9 և ավելի միջհանգույցներ ունեցող, դարչնամանուշակագույն ընձյուղների և վերգետնյա թարմ գանգվածով, համապատասխանաբար, 3,5-4,7; 4,4-6,5; 3,5-4,8; 3,7-5,1 անգամ, իսկ չոր գանգվածով, համապատասխանաբար, 2,8-4,0; 3,8-5,8; 3,0-4,4; 3,1-4,5 անգամ (նկ. 4): Հետագա գիտափորձերում կիրառվել է սնուցման օրական մեկ-երկու անգամյա հաճախականությունը՝ կախված կլիմայական պայմաններից:




Բերքատվությունը (վերգետնյա գանգված) Դավթյանի սննդալուծույթի տարբերակներում:

Բերքատվությունը (վերգետնյա գանգված) սնուցման տարբերակների և հողային մշակույթի պայմաններում:


Հետազոտությունները հաստատեցին, որ սնուցման օրականությունը և սնուցման ժամանակը կարևոր դեր են խաղում կենսազանգվածի արտադրության և կախված կենսաակտիվ նյութերի բնույթից և դրանց սինթեզը խթանող միջավայրի գործոնների առկայությունից, դեղահումքում դրանք տարբեր կերպ են կուտակվել: Միաժամանակ, փորձի բոլոր տարբերակներում

կենսակտիվ նյութերի ելով հիդրոպոնիկ բույսերը զգալիորեն գերազանցել են հողայիններին: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ հիդրոպոնիկայի կառավարվող պայմաններում, փոփոխելով միջավայրի որոշակի գործոններ, կարելի է ուղղորդել նպաստակալի նյութի կենսասինթեզը: Նկար 5-ում պատկերված է սնուցման տարբեր հաճախականությունների կիրառման պայմաններում մեկ բույսից ստացվող դաբաղանյութերի և էքստրակտիվ նյութերի ելը:



Նկ. 5 Բույսերի և էքստրակտիվ նյութերի և դաբաղանյութերի ելը՝ սնուցման տարբեր հաճախականությունների և հողային մշակույթի պայմաններում

Հիմք ընդունելով սննդալուծույթում N, P, K մակրոտարրերի տարբեր հարաբերակցությունների կիրառման պայմաններում ստացված դեղահումքի քանակական տվյալները՝ հաշվարկվել է գլխավոր մակրոտարրերի օպտիմալ հարաբերակցությունը ($N_{43}P_{22}K_{35}$ ատոմ%), որը կարող է ապահովել վերգետնյա չոր գանգվածի առավելագույն ել, իսկ դեղաբույսի բերքատվության և սննդալուծույթում մակրոտարրերի միջև կապը բնութագրվել է հետևյալ ռեգրեսիոն հավասարմամբ. $Y=108,17-1,02X$ ($r=-1$), որտեղ՝ Y-ը բույսի առավելագույն բերքատվությունն է, X-ը՝ N-ի, P-ի, K-ի օպտիմալ հարաբերակցությունն է շեղումը, r-ը՝ կորելացիայի գործակիցը: Այսինքն, կիրառելով սննդալուծույթում մակրոտարրերի $N_{43}P_{22}K_{35}$ ատոմ% հարաբերակցությունը, հնարավոր է մեկ բույսից ստանալ 108,17 գ վերգետնյա չոր գանգված: Գլխավոր մակրոտարրերի այս հարաբերակցությունից 1 ատոմ% շեղվելու դեպքում բույսի բերքատվությունը կնվազի 1,02 գ-ով: Դեղահումքում կենսակտիվ նյութերի սինթեզի համար սննդալուծույթում մակրոտարրերի օպտիմալ հարաբերակցություններն են (ատոմ%). ա) էքստրակտիվ նյութերի համար. տերևների դեպքում՝ $N_{38}P_{30}K_{32}$, ընծյուղների դեպքում՝ $N_{37}P_{31}K_{32}$; բ) գումարային Φ լավոնոիդների համար. տերևների դեպքում՝ $N_{14}P_{29}K_{57}$, ընծյուղների դեպքում՝ $N_{15}P_{36}K_{49}$; գ) դաբաղանյութերի համար. տերևների դեպքում՝ $N_{16}P_{39}K_{45}$, ընծյուղների դեպքում՝ $N_{18}P_{31}K_{51}$: Դեղահումքում կենսակտիվ նյութերի սինթեզի և սննդալուծույթում մակրոտարրերի միջև կապը բնութագրող ռեգրեսիոն հավասարումներն ունեն հետևյալ տեսքը. էքստրակտիվ նյութերի համար. տերևների դեպքում՝ $Y=44,17-0,33X$ ($r=-0,998$); ընծյուղների դեպքում՝ $Y=48,66-0,35X$ ($r=-0,993$); գումարային Φ լավոնոիդների համար. տերևների դեպքում՝ $Y=0,74-0,0083X$ ($r=-1$); ընծյուղների դեպքում՝ $Y=0,37-0,0041X$ ($r=-1$); $Y=1,83-0,019X$ ($r=-1$);



Նկ. 6 Էքստրակտիվ նյութերի և դաբաղանյութերի ելը՝ սնուցման տարբեր հաճախականությունների և հողային մշակույթի պայմաններում

ընձյուղներին դեպքում՝ $Y=2,18-0,022X$ ($r=-0,998$): Մաթեմատիկական մոդելներում արտացոլված են դեղահումքում կենսակտիվ նյութերի սպասվող առավելագույն պարունակությունները (%), ինչպես նաև մակրոտարրերի 1 առում% շեղվելու դեպքում դրանց նվազող քանակները:



Միաժամանակ, տեսականորեն հաշվարկվել է նաև սննդալուծույթում կալիզիայի վերգետնյա զանգվածի առավելագույն ել ապահովող մակրոտարրերի օպտիմալ հարաբերակցության կիրառման դեպքում ստացվող դեղահումքից կենսակտիվ նյութերի սպասվող ելը, որը համեմատվել է դեղահումքում կենսակտիվ նյութերի առավելագույն պարունակությունը ապահովող մակրոտարրերի օպտիմալ հարաբերակցության կիրառման դեպքում ստացվող դեղահումքից կենսակտիվ նյութերի սպասվող ելի հետ: Պարզվել է, որ դեղահումքից կենսակտիվ նյութերի ելը գրեթե չի տարբերվել: Ուստի, վերգետնյա զանգվածի և կենսակտիվ նյութերի առավելագույն ել ստանալու համար կարելի է սննդալուծույթում պահպանել N-ի, P-ի, K-ի 43:22:35 առում% հարաբերակցությունը:

Մեր կողմից փորձարկված տնկարկի խոտընդուն էական ազդեցություն չի ունեցել դեղաբույսի արդյունավետության վրա՝ մեկ բույսի հաշվով, սակայն տարբերությունն էական է միավոր մակերեսի հաշվով: Ուստի, արտադրական նպատակով առավել նպատակահարմար է կիրառել տնկարկի 14 բույս/մ² խոտընդունը, ինչը հնարավորություն կտա միավոր մակերեսից ստանալ ավելի շատ բերք՝ բարձր որակական ցուցանիշներով:

ԳԼՈՒԽ4. CALLISIA FRAGRANS-Ի (ԲՈՒՐԱԿԵՏ ԿԱԼԻԶԻԱ) ՖԻԶԻՈԼՈԳԻ-ԿԵՆՍԱ-ԴԵՂԱՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԱԳՐՈ-ՈՒԴԻՈՔԻՄԻԱԿԱՆ ԱՄԱՆԱՅՐ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջավայրի գործոնների նկատմամբ մեծ զգայունություն են ցուցաբերել նաև դեղաբույսի ֆիզիոլոգիական-սահեղաքիմիական ցուցանիշները: Տերևների ֆիզիոլոգիական ակտիվությունը պայմանավորող ազատ ջրի բարձր պարունակությունը գրանցվել է հրաբխային խարամում աճեցված բույսերում, որն ավելացել է սննդալուծույթի խոտընդուն փոքրացմանը և սնուցման հանդիմանացմանը գուլգընթաց (նկ. 6), ինչպես նաև սննդալուծույթում ազդեցիվ մեծ մասնաբաժնի դեպքում: Վերջինս խթանել է նաև դեղաբույսի տերևներում քլորոֆիլի սինթեզը: Իսկ կապված ջրի և բջջահյութի օսմոտիկ ճնշման դեպքում գրանցվել են հակադարձ օրինաչափություններ:

